

Տ Ե Ղ Ե Կ Ո Ւ Թ Ի Ի Ն Ք Օ Ր Ա Յ Ո Ւ Յ Ի

1862

Առաջիկայ 1862 տարւոյն համար մեր տպարանէն ելած օրացոյցը յուսամբ թէ առաւել ընդունելի լինի հասարակաց՝ քան թէ մեր երկու նախընթաց տարուանները՝ աւելի դիւրատար; աւելի ճոխ եւ աւելի աժան լինելուն պատճառաւ:

Իսկզբանէ հետէ փափաքելի էր մեզ Անուանական ցուցակներով ու վիճակագրական տեղեկութիւններով զարդարել մեր օրացոյցը; բայց այս երրորդ տարին է որ դեռ մեր ուզածին չափ չկարողացանք օրացուցին այս մասը կատարելագործել:

Այս վիճակիս մէջի պաշտօնատեսարց եւ երեւելի անձանց անուանական ցուցակը օրինակ կրնայ լինել մեր ընտրած ձեւոյն. եւ սակայն դեռ մեր ուզած կատարելութիւնը չկրցաւ ունենալ նաեւ այս տարի ոչ ամբողջութեանը եւ ոչ ճշգրտութեանը կողմանէ: Եւ այս բանիս գլխաւոր պատճառ եղաւ այն ցուցակաց այլ եւ այլ քաղաքներէն ուշ ուշ հասնելով՝ օրացուցին տպագրութեանն ալ ուշանալը. որով հարկ եղաւ սատարի փութալով տպել օրացոյցը; այնչափ որ մինչեւ մօտաւոր քաղաքաց պաշտօնատէր ու երեւելի

անձինքներէն տմանք սխալմամբ դուրս մնացին ցուցակէն: Օրինակի համար, նոյն իսկ Թէոդոսիոյ ցուցակէն դուրս մնացեր են Ժողովրդական դպրոցիս վրայ տեղեկութիւնները. այսինքն թէ Հոգաբարձուքն են Ձէմպէրճեան Մահտեսի Վարդերես, եւ Ալթունճեան Կարապետ. Վարժապետք՝ Մարտիրոս քահանայ Տէր Գաւթեան, Տէօլլեթեան Գրիգոր; եւ Մանգակունեան Գէորգ, եւ Աշակերտաց թիւը 58: — նմանապէս Թէոդոսիոյ քաղաքական պաշտօնատեսարց անուններուն մէջէն դուրս մնացեր է Քաղաքական ձարտարապետը՝ Աղեքսանդր Սերգիս:

Այս ծանօթութիւնը հարկ համարեցանք տալ մէյմը անոր համար՝ որ այսուհետեւ մեզի ցուցակ յուղարկողները աշխատին անպատճառ սեպտեմբեր ամսոյն մէջ հասցընել զայն մեր ձեռքը որ ժամանակ սւնենամք ըստուգելու եւ կարգի դնելու. եւ երկրորդ՝ անոր համար որ զուր տեղը պակասաւոր չլինին մեր ցուցակները; այլ ըստ կարի ճիշդ եւ ամբողջ, եւ եթէ ոմանց անունները վերը յիշուած օրինակներուն պէս դուրս մնացած լինին՝ սրտցաւութիւն չպատահի:

Շ Ն Ո Ր Հ Ա Կ Ա Լ Ի Ք

Ա Ռ

Ը Ն Թ Ե Ր Յ Ա Ս Է Ր Ս Ե Ի Գ Ո Ր Ծ Ա Կ Ա Լ Ս Ա Ղ Ա Ի Ն Ի Ո Յ Ս

Մասեաց Աղաւնին իւր այս տարեկան ընթացքը չկրնար լմընցընել՝ առանց հրատարակաւ հաղորդելու մեր շնորհակալութիւնը այն ամենայն բարեսիրաց որ հաճեցան սիրով ընդունիլ զսա եւ կարգալ յօգուտ անձանց եւ այլոց: Կյուսամբ որ առաջիկայ 1862 տարւոյն մէջ եւս նոյն բարեբաղդութիւնն

ունենայ այս մեր աշխատասիրութիւնը՝ թէ մեր ազգասէր Գործակալներուն աշխատանքը, եւ թէ ազգայնոց հետզհետէ ընթերցասիրութեան համն առնելովը. եւ այսու յուսով կխոստանամք մեք ալ մեր կողմանէ ոչ միայն ներքին եւ էական կատարելութիւններ տալ ամսագրոյս; այլ եւ ամենայն